ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.1/[154102]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ռ. Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ա. Խաչատուրյան	ՀԱՄՀ-ի գործադիր տնօրեն
Ժ. Կարաասլանյան	«Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ա. Օսիպյան	Հայաստանի բանկերի միության նախագահ
Վ. Քոչարյան	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ

Topchyan30.04.13-4

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE» FOUNDATION
ՄՈՏՏԵ N Հ-05/13-108-21
«14» 05 2013 թ.

1. Հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի անդամների ընտրություն և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավատարմագրման հանձնաժողովի անդամներ ընտրել հետևյալ անձանց՝

ա. ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, ԵՊՀ-ի ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար, ամբիոնի վարիչ Սամվել Շուքուրյանին,

բ. ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս, Քիմիական գիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ-ի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար, ԵՊՀ-ի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սաղյանին.

գ. ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս, պրոֆեսոր, ՀՊՃՀ-ի պատվավոր պրոֆեսոր, ամբիոնի վարիչ Յուրի Սարգսյանին,

դ. Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ, Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանին.

ե. Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսոր Սամվել Ավետիսյանին,

զ. Հայաստանի ամերիկյան համալսարանի հավատարմագրման կենտրոնի ղեկավար Շարիստան Մելքոնյանին,

է. ՀՀ պաշտպանության նախարարության ազգային անվտանգության ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ Հայկ Քոթանջյանին,

ը. ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի ասիստենտ Նելլի Հովհաննիսյանին.

թ. Կոլումբիայի համալսարանի շրջանավարտ Սահականույշ Սարգսյանին՝ որպես ուսանողության ներկայացուցիչ.

2) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ Շարիստան Մելքոնյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի ամերիկյան համալսարանի ղեկավարությանը, նշելով որ Հավատարմագրման հանձնաժողովը նախընտրում է կին թեկնածուի առաջադրում, և

դրական արձագանքի դեպքում նրան ներառել հավատարմագրման հանձնաժողովի կազմում.

3) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի անդամների վերջնական համաձայնեցված ցուցակը:

2. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ վերանայել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի կարգը և ըստ անհրաժեշտության խմբագրել.

2) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի կարգի վերջնական խմբագրված տարբերակը.

3) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին՝

ա. հայտարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ և այն տեղադրել ՀՀ կառավարության պաշտոնական կայք-էջում,

բ. 15-օրյա ժամկետում ամփոփել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար ներկայացված հայտերը, կազմակերպել մրցույթի անցկացումը և արդյունքները ներկայացնել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ